

**Չմշակված նավթի և (կամ) նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման
մասով անդամ պետությունների պարտավորություն սահմանող՝ խորհրդի 2009
թվականի սեպտեմբերի 14-ի 2009/119/ԵՀ հրահանգ**

Պաշտոնական տեղեկագիր, L 265, 09/10/2009թ., էջ 0009–0023

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 100-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [2],

տվյալների պաշտպանության հարցերով եվրոպական վերահսկիչ մարմնի հետ
խորհրդակցելուց հետո [3],

Քանի որ

1) Համայնքին չմշակված նավթ և նավթամթերք մատակարարելու խնդիրը մնում շատ
կարևոր, մասնավորապես, տրանսպորտի ոլորտի և քիմիական արդյունաբերության
համար,

2) արտադրության կենտրոնացվածության աճը, նավթի սպառվող պահուստները և ամբողջ
աշխարհում նավթամթերքների սպառման աճը նպաստում են մատակարարման հետ
կապված ռիսկերի հավանականության բարձրացմանը,

3) Եվրոպական խորհուրդն իր (2007-ից 2009 թթ.-ի) «Եվրոպայի էներգետիկ
քաղաքականություն» կոչվող գործողությունների ծրագրում ընդգծեց ընդհանուր առմամբ
Եվրոպական միությանը (ԵՄ) և յուրաքանչյուր անդամ պետությանը տրամադրվող
մատակարարումների անխափանության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝
մասնավորապես, Միության նավթի պաշարների հաշվարկման մեխանիզմների
վերանայման միջոցով, ինչպես նաև հատուկ կերպով անդրադարձավ ճգնաժամի դեպքում
նավթի առկայության հանգամանքին,

4) այդ նպատակի համար, ի թիվս այլ հանգամանքների, պահանջվում են Համայնքի համակարգերի և Միջազգային էներգետիկ գործակալության (այսուհետ՝ՄԷԳ) կողմից նախատեսված համակարգերի միջև համապատասխանության ավելի ընդարձակ եզրեր,

5) Չմշակված նավթի և (կամ) նավթամթերքների նվազագույն քանակությամբ պաշարների պահպանման մասով անդամ պետությունների պարտավորություն սահմանող՝ Խորհրդի 2006 թվականի հուլիսի 24-ի 2006/67/ԵՀ հրահանգի համաձայն [4] պաշարները հաշվարկվում են նախորդ օրացույցային տարվա ընթացքում օրական ներքին սպառման միջին արժեքի հիման վրա: Այնինչ Միջազգային էներգետիկ ծրագրի 1974 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ ՄԷԳ համաձայնագիր) համաձայն պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունները սահմանելիս հիմք են ընդունվում նավթի և նավթամթերքների զուտ ներմուծումները: Այդ և մեթոդաբանության մեջ առկա այլ տարբերություններով պայմանավորված՝ պահեստային պաշարների և Համայնքի արտակարգ իրավիճակների համար նախատեսված պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանման եղանակները պետք է համապատասխանեցվեն ՄԷԳ համաձայնագրի համաձայն կիրառվող սահմանման եղանակներին՝ անկախ վերջին տասնամյակների տեխնոլոգիական բարելավումների լույսի ներքո դրանց հնարավոր գնահատման փաստից, ինչպես նաև ամբողջապես ներկրումներից կախման մեջ գտնվող ոչ ՄԷԳ անդամ երկրների պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների համապատասխանեցման համար ավելի շատ ժամանակ պահանջվելու հանգամանքից: Պաշարների ծավալների հաշվարկման եղանակների և ընթացակարգերի հետագա փոփոխություններն անհրաժեշտ և օգտակար կարող են լինել ՄԷԳ-ի գործելակերպի հետ համաձայնեցվածության մակարդակի հետագա բարձրացման նպատակով՝ ներառյալ, օրինակ, այն փոփոխությունները, որոնք որոշ անդամ պետությունների դեպքում հանգեցնում են պաշարների հաշվարկման ընթացքում 10 % կրճատման կիրառվող սահմանաչափի նվազեցմանը, որը կհանգեցնի նավթի թեթև ֆրակցիաների պաշարների կամ անդամ պետության տարածքային ջրերում գտնվող բաքերում պահվող պաշարների հաշվմանը,

6) նավթի տեղական արտադրությունն ինքնին կարող է նպաստել մատակարարման անխափանությանը և դրանով կարող է հիմնավորվել որոշ նավթ արտադրող անդամ պետությունների կողմից մյուս անդամ պետությունների համեմատությամբ ավելի քիչ պաշարների պահպանումը: Այդ կարգի շեղումն, այնուամենայնիվ, չպետք է հանգեցնի 2006/67/ԵՀ հրահանգի համաձայն կիրառվող՝ պաշարների պահպանման հետ կապված

պարտավորություններից էապես տարբերվող պարտավորությունների սահմանմանը: Հետևաբար որոշ անդամ պետությունների համար պաշարների պահպանման հետ կապված պարտավորություն սահմանելիս հիմք է ընդունվում նավթի ներքին սպառման, այլ ոչ թե ներկրման հանգամանքը,

7) Բրյուսելի Եվրոպական խորհրդի նախագահության 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի եզրակացությունները վկայում են, որ Համայնքի համար հետզհետե ավելի կենսական կարևորություն ունեցող և հրատապ խնդիր է դառնում միասնական էներգետիկ քաղաքականության, ինչպես նաև Եվրոպական և անդամ պետությունների մակարդակով միավորված գործողության սահմանումը: Այդ իսկ պատճառով կարևոր է ապահովել պաշարների պահպանման տարբեր անդամ պետություններում գործող մեխանիզմներով երաշխավորված չափորոշիչների միջև համապատասխանության ավելի ընդարձակ եզրեր,

8) նավթի պաշարների առկայությունը և էներգամատակարարման ապահովումը Համայնքի և անդամ պետությունների հասարակական անվտանգության կարևոր բաղադրիչներն են: Համայնքում պաշարների պահպանման կենտրոնական կառույցների (ՊՊԿԿ) գոյության շնորհիվ այդ նպատակներն ավելի են փոխկապակցվում: Համապատասխան անդամ պետություններին ազգային իրավունքն օպտիմալ կերպով օգտագործելու և իրենց ՊՊԿԿ-ների համար տեխնիկական առաջադրանքեր սահմանելու հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև միևնույն ժամանակ պաշարների պահպանման գործունեությունների արդյունքում վերջնական սպառողների վրա դրված ֆինանսական բեռը թեթևացնելու համար կարևոր է արգելել պաշարների օգտագործումն առևտրային նպատակներով՝ միևնույն ժամանակ թույլ տալով, որպեսզի պաշարները պահպանվեն Համայնքի ցանկացած տարածքում և այդ նպատակով ստեղծված ցանկացած ՊՊԿԿ-ի կողմից,

9) հաշվի առնելով նավթի պաշարների վերաբերյալ Համայնքի օրենսդրության նպատակները, անվտանգության հնարավոր խնդիրները, որոնք կարող են ներկայացվել անդամ պետությունների կողմից և անդամ պետությունների միջև միասնականության մեխանիզմներն ավելի ճշգրիտ և թափանցիկ դարձնելու ցանկությունը՝ անհրաժեշտ է ՊՊԿԿ-ների շահագործումը հնարավորինս կենտրոնացնել անդամ պետությունների ազգային տարածքներում,

10) նավթի պաշարները պետք է հնարավոր լինի պահպանել Համայնքի ցանկացած տարածքում՝ պայմանով, որ պատշաճ կերպով հաշվի կառնվի դրանց ֆիզիկապես մատչելի լինելու հանգամանքը: Հետևաբար, տնտեսվարող սուբյեկտները, որոնց վերապահված են

պաշարների պահպանման հետ կապված պարտավորություններ, պետք է կարողանան ազատվել իրենց պարտավորություններից՝ դրանք փոխանցելով այլ տնտեսվարող սուբյեկտների կամ ՊՊԿ-ներից ցանկացածին: Ավելին, տրամադրվող ծառայության արժեքին համարժեք գումարի վճարման դիմաց Համայնքի տարածքում գտնվող կամայական կերպով ընտրված ՊՊԿ-ին այդ պարտավորությունների փոխանցման դեպքում կնվազի ազգային մակարդակով խտրական գործելակերպի հավանականությունը: Տնտեսվարող սուբյեկտի կողմից պարտավորություններ փոխանցելու իրավունքը չպետք է ենթադրի որևէ կատարողի կողմից այդ փոխանցված պարտավորության ստանձնում, քանի դեռ սույն Հրահանգով այլ բան չի պահանջվում: Այն դեպքում, երբ անդամ պետությունները որոշում են սահմանափակել տնտեսվարող սուբյեկտի պարտավորություններ փոխանցելու իրավունքները, ապա պետք է ապահովեն, որ վերջիններիս տրվի որոշակի նվազագույն քանակով պարտավորություններ փոխանցելու իրավունք, ինչպես նաև որ իրենց տարածքում գործող ՊՊԿ-ն այդ նվազագույն քանակությամբ պարտավորությունների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ գումարի դիմաց ստանձնի պաշարների պահպանման հետ կապված իրեն փոխանցված պարտավորությունը,

11) անդամ պետությունները պետք է ապահովեն Համայնքի օրենսդրության համաձայն պահպանվող պաշարների լիարժեք հասանելիությունը: Նշված մատչելիությունը երաշխավորելու համար այդ պաշարների նկատմամբ սեփականության իրավունքի որևէ սահմանափակում, որը հնարավոր է, որ խոչընդոտեր դրանց օգտագործմանը նավթի մատակարարման խափանման դեպքում, չպետք է կիրառվի: Հաշվի չպետք է առնվեն այն ընկերությունների սեփականությունը հանդիսացող նավթամթերքները, որոնք կանգնած են իրենց ակտիվների մասով կատարողական վարույթի հարուցման լուրջ վտանգի առջև: Տնտեսվարող սուբյեկտների համար պաշարների պահպանման լուրջ վտանգ ներկայացնող պարտավորության սահմանման դեպքում սնանկության կամ լուծարման վարույթների նախաձեռնումը կարող է դիտվել որպես այդօրինակ վտանգի գոյության ապացույց,

12) առանձնահատուկ հրատապության դեպքերին կամ տեղական ճգնաժամին արագ արձագանքելու հնարավորություն տալու համար տեղին կլինեն անդամ պետություններին թույլ տալ, որ վերջիններս նմանատիպ իրավիճակների դեպքերում օգտագործեն իրենց պաշարների մի մասը: Այդօրինակ հրատապ դեպքերը կամ տեղական ճգնաժամերը չպետք է ներառեն չմշակված նավթի կամ նավթամթերքների գնաճի հետևանքով առաջացած իրավիճակներ, սակայն կարող են ներառել բնական գազի մատակարարման խափանման

դեպքեր, որոնց ժամանակ պահանջվում է անցնել վառելիքի օգտագործմանը՝ այսինքն էներգիայի արտադրության համար օգտագործել չմշակված նավթ կամ նավթամթերքներ,

13) հաշվի առնելով այն ամենն, ինչ պահանջվում է արտակարգ իրավիճակների քաղաքականության սահմանման համար՝ այն է՝ պաշարների պահպանման ազգային մեխանիզմներով երաշխավորված չափորոշիչների համապատասխանեցում և հատկապես ճգնաժամի դեպքում պաշարների ծավալների ավելի հետևողական վերանայման ապահովում՝ անդամ պետությունները և Համայնքը պետք է տիրապետեն այդ պաշարների ուժեղացված վերահսկողության միջոցներին: Երկկողմանի համաձայնագրերի համաձայն պահվող պաշարները կամ որոշակի քանակությամբ պաշարներ (tickets) գնելու պայմանագրային իրավունքները, որոնց համաձայն կատարվում են սույն Հրահանգով սահմանված պարտավորությունները, պետք է կազմեն համապատասխանության ավելի ընդարձակ եզրերի ապահովման նպատակին համահունչ օգտակար գործիքներ,

14) այդ պաշարների զգալի մասի նկատմամբ անդամ պետությունների կամ տարբեր ազգային մարմինների կողմից հիմնված ՊՊԿԿ-ների սեփականության իրավունքի շնորհիվ պետք է հնարավոր լինի բարձրացնել առնվազն պաշարների այդ մասի վերահսկողության և թափանցիկության մակարդակը,

15) Համայնքում մատակարարման անխափանության մակարդակի բարձրացմանը նպաստելու համար անդամ պետությունների կամ ՊՊԿԿ-ների կողմից գնված պաշարները, որոնք հայտնի են որպես «հատուկ պաշարներ» և որոնք ձևավորվում են անդամ պետությունների որոշումների հիման վրա, պետք է համապատասխանեն ճգնաժամի դեպքում փաստացի կարիքներին: Դրանք նաև պետք է ունենան ինքնուրույն իրավական կարգավիճակ՝ նման ճգնաժամի դեպքում լիարժեք հասանելիության ապահովման համար: Այդ նպատակով համապատասխան անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի համապատասխան քայլեր ձեռնարկվեն այդ պաշարները հարկադրանքի միջոցների բոլոր տարատեսակներից անվերապահորեն պաշտպանելու ուղղությամբ,

16) Այս փուլում ՊՊԿԿ-ների կամ անդամ պետությունների կողմից սեփականաշնորհվող պաշարների ծավալները պետք է սահմանվեն յուրաքանչյուր համապատասխան անդամ պետության կողմից՝ անկախ և կամավոր կերպով որոշված չափով,

17) հաշվի առնելով վերահսկողության և թափանցիկության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ վթարային պաշարները, որոնք տարբեր են հատուկ պաշարներից, պետք է բավարարեն դիտանցման հավելյալ պահանջները, իսկ որոշ դեպքերում

անհրաժեշտ է, որպեսզի անդամ պետությունները ծանուցեն վթարային պաշարների հասանելիությունը կարգավորող միջոցների և դրանց պահպանման միջոցառումների հետ կապված ցանկացած փոփոխության վերաբերյալ,

18) պաշարների նորացման անհատական գործընթացով պայմանավորված հատուկ պաշարների ծավալների տատանումները կարող են թույլատրելի լինել անհրաժեշտ այնպիսի գործընթացների անցկացման նպատակով, ինչպիսիք են պաշարների թարմության ապահովումը, արտադրանքի փոփոխված հատկորոշումների հետ համապատասխանության ապահովումը և պաշարների պահեստավորման համար նոր մրցույթների հայտարարումը,

19) այն դեպքում, երբ վթարային պաշարները և հատուկ պաշարները տնտեսվարող սուբյեկտի կողմից պահվում են այլ պաշարների հետ, ապա հատուկ ուշադրություն պետք է դարձվի վթարային պաշարների ծավալներին,

20) պաշարների վերաբերյալ ամփոփագրեր կազմելու 2006/67/ԵՀ հրահանգով սահմանված հաճախականությունը, ինչպես նաև դրանք ներկայացնելու վերջնաժամկետները համաքայլ չեն նավթի պաշարների աշխարհի այլ հատվածներում սահմանված պահպանման մեխանիզմների հետ: Էներգիայի գնի բարձրացման մակրոտնտեսական ազդեցության վերաբերյալ բանաձևում Եվրոպական պառլամենտն արտահայտեց ավելի հաճախ հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ իր հիմնավորումները,

21) տարբեր արտադրատեսակների մասին անդամ պետությունների կողմից տրամադրվող տեղեկատվության հիման վրա կրկնակի հաշվետվություններ ներկայացնելը կանխելու նպատակով «Էներգետիկայի վիճակագրության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1099/2008 կանոնակարգը (ԵՀ) պետք է հիմք ծառայի սույն Հրահանգում նշված նավթամթերքների տարբեր տեսակների համար,

22) մատակարարման անխափանության մակարդակը բարձրացնելու, շուկաներին ավելի լիարժեք տեղեկատվություն տրամադրելու, նավթի պաշարների վիճակի մասին սպառողներին հավաստիացնելու և տեղեկատվության փոխանցման եղանակի օպտիմալացման նպատակով դրույթ պետք է նախատեսվի վիճակագրական ամփոփագրերի պատրաստման և ներկայացման կանոնների հնարավոր հետագա փոփոխության և հստակեցման համար,

23) միևնույն նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է, որպեսզի վիճակագրական ամփոփագրերի ներկայացումը բացի վթարային և հատուկ պաշարներից տարածվի նաև այլ պաշարների վրա և որ այդ ամփոփագրերը ներկայացվեն ամսական կտրվածքով,

24) քանի որ Հանձնաժողովին ներկայացվող ամփոփագրերում կարող են տեղ գտնել սխալներ կամ անհամապատասխանություններ, Հանձնաժողովի աշխատակիցները կամ լիազորված գործակալները պետք է հնարավորություն ունենան ստուգելու վթարային իրավիճակներում անդամ պետությունների պատրաստվածությունը և վերջիններիս կողմից պաշարների պահպանումը: Այդ ստուգումների արդյունավետ և ազգային ընթացակարգերի համաձայն իրականացումն ապահովելու համար պետք է հիմնվել անդամ պետությունների ազգային համակարգերի վրա,

25) էլեկտրոնային և վիճակագրական տվյալների համալիր մշակումը պետք է կատարվի ստացված կամ հավաքած տվյալների մասով: Դրա համար պահանջվում է միասնական գործիքների և ընթացակարգերի կիրառում: Հանձնաժողովը պետք է, հետևաբար, հնարավորություն ունենա ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ այդ և մասնավորապես նոր համակարգչային համակարգերի մշակման նպատակով,

26) անդամ պետությունների կողմից անձնական տվյալների մշակման ժամանակ անձանց պաշտպանությունը կարգավորվում է «Անձնական տվյալների մշակման ժամանակ անձանց պաշտպանության ու այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգով [6], մինչդեռ Հանձնաժողովի կողմից անձնական տվյալների մշակման ժամանակ անձանց պաշտպանությունը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի «Համայնքի կառույցների և մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ժամանակ անհատների պաշտպանության և նման տվյալների ազատ տեղաշարժի մասին» թիվ 45/2001 կանոնակարգով (ԵՀ) [7]: Այդ ակտերով, մասնավորապես, պահանջվում է, որպեսզի անձնական տվյալների մշակումը հիմնավորված լինի օրինական նպատակով, ինչպես նաև դրանցով սահմանված է, որ չնախատեսված կերպով հավաքված անձնական տվյալները պետք է անմիջապես ջնջվեն,

27) Նավթամթերքների հետ հաճախ խառնվում են բիովառելիքներ և որոշ հավելանյութեր: Նավթամթերքներն այդ նյութերի հետ խառնելու կամ նման մտադրության դեպքում պետք է հնարավոր լինի դրանց հաշվի առնումը ինչպես պաշարների պահպանման հետ կապված պարտավորության սահմանման, այնպես էլ պահվող պաշարների հաշվարկման ժամանակ,

28) համապատասխան անդամ պետություններին պետք է թույլ տրվի կատարել ՄԷԳ համաձայնագրի կամ կիրարկող ակտերի համաձայն պաշարների բացթողման վերաբերյալ կայացված որոշումից բխող ցանկացած պարտավորություն: ՄԷԳ-ի որոշումների պատշաճ կերպով և ժամանակին կատարումը մատակարարման հետ կապված դժվարությունների դեպքերին արդյունավետ արձագանքելու հիմնական գործոններից է: Դա ապահովելու նպատակով անդամ պետություններն իրենց վթարային պաշարները պետք է բաց թողնեն ՄԷԳ-ի համապատասխան որոշմամբ նախատեսված չափով: Հանձնաժողովը պետք է սերտորեն համագործակցի ՄԷԳ-ի հետ և Համայնքի մակարդակով գործողությունների դեպքում հիմնվի ՄԷԳ-ի մեթոդաբանության վրա: Հանձնաժողովը, մասնավորապես, պետք է կարողանա անդամ պետություններին ներկայացնել պաշարների բացթողման առաջարկ՝ հարկ եղած դեպքում ՄԷԳ-ի որոշմանը լրացնելու և դրա իրականացմանը նպաստելու համար, որով վերջինիս անդամներին պաշարների բացթողման կոչ է արվում: Ի շահ ողջ Համայնքի, ինչպես նաև ՄԷԳ-ի անդամ հանդիսացող և չհանդիսացող անդամ պետությունների միջև կուռ համերաշխության և համախմբվածության՝ հարկ է, որ անդամ պետությունները մատակարարման խափանման դեպքում դրական պատասխան տան Հանձնաժողովի այդօրինակ առաջարկներին,

29) «Չմշակված նավթի և նավթամթերքների մատակարարման հետ կապված դժվարությունների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցների մասին» Խորհրդի 1973 թվականի հուլիսի 24-ի 73/238/ԵՏՀ հրահանգը [8], մասնավորապես, նախատեսված է անգամ առժամանակ չեզոքացնելու կամ գոնե նվազեցնելու համար ցանկացած դժվարության բացասական ազդեցությունները, ինչպիսիք են չմշակված նավթի կամ նավթամթերքների մատակարարման ծավալների էական նվազեցումը՝ ներառյալ այդ նվազեցմամբ պայմանավորված Համայնքի գործունեության լուրջ խաթարումը: Սույն Հրահանգը պետք է ներառի համանման միջոցներ,

30) 73/238/ԵՏՀ հրահանգը նաև նպատակաուղղված է այս ոլորտում անդամ պետությունների կողմից առաջարկված կամ ձեռնարկված գործնական միջոցների համակարգման նպատակով խորհրդակցական մարմնի ստեղծմանը: Սույն Հրահանգով պետք է նախատեսվի այդպիսի մարմին: Յուրաքանչյուր անդամ պետության համար դեռևս անհրաժեշտ խնդիր է մնում այնպիսի ծրագրի կազմումը, որը կարելի կլիներ օգտագործել չմշակված նավթի և նավթամթերքների մատակարարման հետ կապված դժվարությունների դեպքում: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նաև կարգավորումներ նախատեսի ճգնաժամի դեպքում ձեռնարկվող կազմակերպական միջոցների մասով,

31) հաշվի առնելով սույն Հրահանգով մի շարք նոր մեխանիզմների ներմուծման հանգամանքը՝ պետք է ստուգվի դրա իրականացումը և գործունեության կարգը,

32) սույն Հրահանգը փոխարինում կամ կարգավորում է «Կառավարությունների միջև չմշակված նավթի և (կամ) նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման մասով անդամ պետությունների պարտավորությանը վերաբերող անհատական համաձայնագրերի կնքման և իրականացման մասին» Խորհրդի 1968 թվականի դեկտեմբերի 20-ի 68/416/ԵՏՀ որոշմամբ [9] կարգավորվող բոլոր հայեցակետերը: Այդ Որոշումը հետևաբար այլևս որևէ նպատակի չի ծառայում,

33) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ անդամ պետությունների միջև համերաշխության սկզբունքի վրա հիմնված հուսալի և թափանցիկ մեխանիզմների միջոցով Համայնքում նավթի մատակարարման անխափանության բարձր մակարդակի պահպանումը՝ միևնույն ժամանակ համապատասխանելով ներքին շուկայի և մրցակցության կանոններին, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից և ուստի դրա մասշտաբի ու ազդեցության պատճառով կարող է առավել լավ իրականացվել համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

34) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [10] համապատասխան,

35) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, հնարավորության սահմաններում կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

36) 73/238/ԵՏՀ և 2006/67/ԵՀ հրահանգները և 68/416/ԵՏՀ որոշումը պետք է, հետևաբար, ուժը կորցրած ճանաչվեն,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգով սահմանվում են կանոններ, որոնք նպատակաուղղված են Համայնքում նավթի մատակարարման անխափանության բարձր մակարդակի ապահովմանը՝ չմշակված նավթի և (կամ) նավթամթերքների նվազագույն պաշարներ պահպանող անդամ պետությունների միջև համերաշխության սկզբունքի վրա հիմնված հուսալի և թափանցիկ մեխանիզմների միջոցով, ինչպես նաև գործողության մեջ են դրվում լուրջ պակասուրդի դեպքում կիրառվող անհրաժեշտ ընթացակարգային միջոցներ:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի իմաստով՝

ա) «բազային տարի» նշանակում է սպառման կամ պահման ենթակա պաշարների կամ տվյալ ժամանակ փաստացի պահվող պաշարների հաշվարկման համար օգտագործվող զուտ ներկրումների տվյալների օրացույցային տարի,

բ) «հավելանյութեր» ոչ ածխաջրածնային միացություններ, որոնք ավելացվում կամ խառնվում են նյութի հետ, վերջինիս հատկանիշների փոփոխության նպատակով,

գ) «բիովառելիք» նշանակում է կենսազանգվածից արտադրված հեղուկ կամ գազային վառելիք, որն օգտագործվում է տրանսպորտի ոլորտում, «կենսազանգվածը» գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական և կենդանական նյութերը), անտառամշակման և հարակից արդյունաբերությունների արտադրանքի, թափոնների և մնացորդների, ինչպես նաև արդյունաբերական և քաղաքային թափոնների կենսաբանորեն քայքայվող մասն է,

դ) «ներքին սպառում» նշանակում է Հավելված II-ի համաձայն հաշվարկված և երկրի ներսում սպառողներին էներգիայի ստացման կամ այլ նպատակով օգտագործման նպատակով մատակարարումների ընդհանուր քանակությունը, որը ներառում է փոխակերպման, ինչպես նաև արդյունաբերության, տրանսպորտի, կենցաղային և այլ ոլորտներին «վերջնական սպառման» համար մատակարարումները, այն նաև ներառում է էներգետիկ ոլորտի կարիքների նպատակով սպառումը (բացառությամբ թորվող վառելիքի),

ե) «պաշարների բացթողման միջազգային գործող որոշում» նշանակում է Միջազգային էներգետիկ գործակալության Կառավարման խորհրդի կողմից կայացված և վերջինիս անդամների կողմից պահվող պաշարների բացթողման միջոցով չմշակված նավթը կամ նավթամթերքները շուկայի համար մատչելի դարձնելու վերաբերյալ ցանկացած ուժի մեջ մտած որոշում,

զ) «պաշարների պահպանման կենտրոնական կառույց» (ՊՊԿԿ) նշանակում է մարմին կամ ծառայություն, որին կարող է վերապահվել նավթի պաշարներ՝ ներառյալ վթարային և հատուկ պաշարներ ձեռք բերելու, պահպանելու կամ վաճառելու լիազորություններ,

է) «մատակարարման խոշոր խափանում» նշանակում է Համայնքին կամ անդամ պետությանը չմշակված նավթի կամ նավթամթերքների մատակարարման ծավալների էական և հանկարծակի անկում՝ անկախ դրա արդյունքում պաշարների բացթողման միջազգային գործող որոշման կայացման հանգամանքից,

ը) «Միջազգային ծովագնացության նավերի լցավորման համար օգտագործված վառելիքի քանակություն» ունի թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Հավելված Ա-ի 2.1 բաժնով դրան տրված իմաստ,

թ) «նավթի պաշարներ» նշանակում են թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Հավելված Գ-ի 3.1 բաժնում նշված էներգետիկ արտադրանքների պաշարները,

ժ) «վթարային պաշարներ» նշանակում են յուրաքանչյուր անդամ պետության կողմից 3-րդ հոդվածի համաձայն պահպանման ենթակա պաշարներ,

ժա) «առևտրային պաշարներ» նշանակում են տնտեսավարող սուբյեկտների կողմից պահվող նավթի պաշարները, որը չի բխում սույն Հրահանգի պահանջներից,

ժբ) «հատուկ պաշարներ» նշանակում են 9-րդ հոդվածի չափանիշներին համապատասխանող պաշարները,

ժգ) «ֆիզիկական մատչելիություն» նշանակում է պաշարների փոխադրման և տեղակայման հետ կապված միջոցառումներ, որոնք թույլ կտան ապահովել դրանց բացթողումը կամ արդյունավետ առաքումը վերջնական սպառողներին և շուկաներին՝ այնպիսի ժամանակահատվածում կամ պայմաններով, որոնք կնպաստեն մատակարարման հետ կապված խնդիրների մեղմացմանը:

Սույն հոդվածով սահմանված սահմանումները կարող են պարզաբանվել կամ փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 3

Վթարային պաշարներ– պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանումը

1. Անդամ պետություններն ընդունում են օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական ակտեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի մինչ 2012 թվականի դեկտեմբերի 31–ը Համայնքի տարածքում ցանկացած ժամանակ ի շահ իրենց պահպանվող նավթի ամբողջ պաշարների ծավալները համապատասխանեն առնվազն զուտ ներկրումների օրական միջին արժեքի հիման վրա 90 օրվա կամ ներքին սպառման օրական միջին արժեքի հիման վրա 61 օրվա կտրվածքով հաշվարկված քանակություններին՝ կախված թե որ քանակությունն է գերակշռողը:

2. Հաշվի առնվող օրական զուտ ներկրումների միջին արժեքը հաշվարկվում է նախորդ օրացույցային տարվա ընթացքում չմշակված նավթի համարժեքով (էկվիվալենտ) արտահայտված ներկրումների տվյալների հիման վրա և որոշվում է I հավելվածով սահմանված եղանակի և ընթացակարգերի համաձայն:

Հաշվի առնվող օրական ներքին սպառման միջին արժեքը հաշվարկվում է նախորդ օրացույցային տարվա ընթացքում չմշակված նավթի համարժեքով արտահայտված ներքին սպառման տվյալների հիման վրա և հաստատվում ու հաշվարկվում է II հավելվածով սահմանված եղանակի և ընթացակարգերի համաձայն:

3. Այնուամենայնիվ, ի տարբերություն 2-րդ պարբերության, յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչ մարտի 31- ն ընկած ժամանակահատվածի կտրվածքով այդ պարբերության մեջ նշված զուտ ներկրումների և ներքին սպառման օրական միջին արժեքները սահմանվում են անցած տարվա ընթացքում, որը նախորդում է տվյալ օրացույցային տարվան, ներկրումների և սպառումների քանակությունների հիման վրա:

4. Պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանման սույն հոդվածում նշված եղանակներն ու ընթացակարգերը կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 4

Պաշարների ծավալների հաշվարկումը

1. Պահվող պաշարների ծավալները հաշվարկվում են III հավելվածում ներկայացված եղանակների կիրառմամբ: 9-րդ հոդվածի համաձայն պահվող յուրաքանչյուր կատեգորիայի պաշարների ծավալները հաշվարկելիս այդ եղանակները կիրառվում են միայն տվյալ կատեգորիայի նյութերի նկատմամբ:
2. Տվյալ ժամանակահատվածում պահվող պաշարների ծավալները հաշվարկելիս կիրառվում են 3-րդ հոդվածում նշված կանոնների համաձայն սահմանված բազային տարվա տվյալները:
3. Նավթի ցանկացած պաշարներ կարող են միաժամանակ ներառվել անդամ պետությունների և՛ վթարային և՛ հատուկ պաշարների հաշվարկներում՝ պայմանով, որ նավթի այդ պաշարները բավարարում են սույն Հրահանգով պաշարների երկու տեսակների համար սահմանված բոլոր պայմանները:
4. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված պաշարների ծավալների հաշվարկման եղանակներն ու ընթացակարգերը կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն: Մասնավորապես, այդ եղանակների և ընթացակարգերի փոփոխությունը, այդ թվում նաև III հավելվածով նախատեսված կրճատման սահմանաչափի կիրառումը կարող է անհրաժեշտ և օգտակար լինել ՄԷԳ-ի գործելակերպի հետ համաձայնեցվածության ապահովման նպատակով:

Հոդված 5

Պաշարների հասանելիությունը

1. Անդամ պետությունները մշտապես ապահովում են վթարային և հատուկ պաշարների սույն Հրահանգի նպատակներով հասանելիությունը և ֆիզիկական մատչելիությունը: Անդամ պետությունները սահմանում են այդ պաշարների նույնականացմանը, հաշվառմանը և վերահսկմանն ուղղված միջոցառումներ, որոնք թույլ կտան նրանց ստուգել դրանք ցանկացած ժամանակ: Այս պահանջը կիրառվում է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ պաշարների հետ պահվող ցանկացած վթարային և հատուկ պաշարների նկատմամբ:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները կանխելու համար բոլոր այն խոչընդոտները և արգելքները, որոնք հնարավոր է, որ խոչընդոտեն վթարային և հատուկ պաշարների հասանելիությանը: Յուրաքանչյուր անդամ պետության վթարային և հատուկ պաշարներն իր տարածքից դուրս պահվելու հավանականության դեպքում վերջինիս կողմից կարող են նախատեսվել սահմանափակումներ կամ հավելյալ պայմաններ:

2. 20-րդ հոդվածով նախատեսված արտակարգ իրավիճակի դեպքում կիրառվող ընթացակարգերի իրականացման համար պատճառներ լինելու դեպքում անդամ պետություններն արգելում են այլ անդամ պետության կողմից իրենց տարածքում պահվող վթարային կամ հատուկ պաշարների փոխանցմանը, օգտագործմանը կամ բացթողմանը խոչընդոտող ցանկացած միջոցառում և ձեռնպահ են մնում այդպիսիք ձեռնարկելուց:

Հոդված 6

Վթարային պաշարների գրանցումը- տարեկան հաշվետվություն

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ի շահ վերջինիս պահվող բոլոր վթարային, այլ ո՛չ հատուկ պաշարների մասով վարում է շարունակաբար թարմացվող և մանրամասն գրանցամատյան: Այդ գրանցամատյանը, մասնավորապես, պարունակում է տվյալ պաշարների գտնվելու վայրերը, այն է՝ պահուստները, թորման գործարանը կամ պահեստը, դրանցում ընդգրկված պաշարների քանակությունները, պաշարների սեփականատիրոջը և այդ պաշարների բնույթը հստակ պարզելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ հղում ներառելով թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Հավելված Գ-ի 3.1 բաժնի առաջին պարբերությամբ սահմանված կատեգորիաներին:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն մինչ ամեն տարվա փետրվարի 25-ը Հանձնաժողովին է ուղարկում 1-ին պարբերության մեջ նշված պաշարների գրանցամատյանի համառոտ օրինակը, որում ներկայացված են նախորդ օրացույցային տարվա վերջին օրվա դրությամբ գրանցամատյանում ներառված առնվազն վթարային պաշարների քանակությունների և բնույթի վերաբերյալ տվյալներ:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովի պահանջի դեպքում 15 օրվա ընթացքում վերջինիս են ուղարկում նաև գրանցամատյանի ամբողջական օրինակը, այս օրինակում պաշարների գտնվելու վայրի հետ կապված հատուկ տվյալները կարող են ներկայացված չլինել: Այդօրինակ պահանջներ կարող են ներկայացվել, ոչ ուշ քան 5 տարի անց այն

ժամանակահատվածից, որին վերաբերում են պահանջվող տվյալները և դրանք չպետք է պարունակեն մինչ 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ տվյալներ:

Հոդված 7

Պաշարների պահպանման կենտրոնական կառույցները

1. Անդամ պետությունները կարող են հիմնել ՊՊԿԿ-ներ:

Որևէ անդամ պետություն չի կարող հիմնել մեկից ավելի ՊՊԿԿ-ներ կամ այլ համանման մարմիններ: Ցանկացած անդամ պետություն իր ՊՊԿԿ-ն կարող է հիմնել Համայնքի ներսում գտնվող կամայական վայրում:

Անդամ պետության կողմից ՊՊԿԿ-ի հիմնադրման դեպքում վերջինս ձեռք է բերում շահույթ չհետապնդող և ընդհանուր շահերից բխող գործունեություն ծավալող մարմնի կամ ծառայության իրավական կարգավիճակ և սույն Հրահանգի իմաստով չի համարվում տնտեսվարող սուբյեկտ:

2. ՊՊԿԿ-ի հիմնական նպատակը պաշարների ձեռքբերումը, պահպանումն ու վաճառքն է՝ սույն Հրահանգի կամ պաշարների պահպանման վերաբերյալ միջազգային համաձայնագրերին համապատասխանելու նպատակներով: Այն միակ մարմինն է կամ ծառայությունը, որին կարող են վերապահվել հատուկ պաշարներ ձեռք բերելու կամ վաճառելու լիազորություններ:

3. ՊՊԿԿ-ները կամ անդամ պետությունները որոշակի ժամկետով կարող են վթարային պաշարների կառավարման՝ բացառությամբ վաճառքի և ձեռքբերման աշխատանքները պատվիրակել միայն՝

ա) մեկ այլ անդամ պետության, որի տարածքում են տեղակայված այդ պաշարները և կամ այդ անդամ պետության կողմից հիմնված ՊՊԿԿ-ի: Այդ կերպ պատվիրակված աշխատանքները չեն կարող վերապատվիրակվել այլ անդամ պետությունների կամ վերջիններիս կողմից հիմնված ՊՊԿԿ-ների: ՊՊԿԿ-ն հիմնող անդամ պետությունը, ինչպես նաև յուրաքանչյուր անդամ պետություն, որի տարածքում պետք է պահվեն պաշարները, թույլտվության դեպքում ունեն պատվիրակումը պայմանական դարձնելու իրավունք:

ա) տնտեսվարող սուբյեկտների: Այդ կերպ պատվիրակված աշխատանքները չեն կարող վերապատվիրակվել: Այն դեպքում երբ պատվիրակումը, կամ դրա փոփոխությունը և կամ ընդլայնումը ներառում է մեկ այլ անդամ պետությունում պահվող վթարային և հատուկ պաշարների կառավարմանն առնչվող աշխատանքներ, ապա դա պետք է նախօրոք թույլատրվի թե այն անդամ պետության կողմից որի համար պետք է այդ պաշարները պահվեն և թե այն բոլոր անդամ պետությունների կողմից, որոնց տարածքում պետք է դրանք պահվեն:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն, որն ունի ՊՊԿԿ, 8(1) և (2) հոդվածի նպատակներով պահանջում է, որպեսզի վերջինս հրապարակի՝

ա) շարունակական հիմունքներով, ըստ ապրանքի կատեգորիայի բաժանված և պաշարների այն ծավալների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, որոնք այն կարող է հանձն առնել պահպանել տնտեսվարող սուբյեկտի կամ, համապատասխան դեպքում, շահագրգիռ ՊՊԿԿ-ի փոխարեն.

բ) առնվազն 7 ամիս առաջ, այն պայմանները որոնց համաձայն այն ցանկություն է հայտնում տնտեսվարող սուբյեկտների փոխարեն մատուցել պաշարների պահպանմանն առնչվող ծառայություններ: Պայմանները, որոնցով կարող են մատուցվել ծառայություններ՝ ներառյալ պլանավորման հետ կապված պայմանները, կարող են նաև սահմանվել ազգային իրավասու մարմինների կողմից կամ մրցակցային հիմունքներով կատարված ընտրության արդյունքում, որը նախատեսված է տնտեսվարողների առաջարկներից լավագույնը որոշելու համար կամ, համապատասխան դեպքում, շահագրգիռ ՊՊԿԿ-ների կողմից:

ՊՊԿԿ-ներն այդ պատվիրակումներն ընդունում են օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական պայմաններով: ՊՊԿԿ-ի ծառայության դիմաց տնտեսվարողների վճարումները չպետք է գերազանցեն տրամադրված ծառայությունների ամբողջ արժեքը և չեն կարող պահանջվել քանի դեռ պաշարները չեն ձևավորվել: ՊՊԿԿ-ն կարող է այդ պատվիրակումն ընդունել պայմանականորեն:

Հոդված 8

Տնտեսվարող սուբյեկտները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որպեսզի ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, որի համար իր կողմից սահմանվել են պաշարների պահպանման

հետ կապված պարտավորություններ, 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարման համար ստանա այդ պարտավորությունները, գոնե մասամբ և իր ընտրությամբ, պատվիրակելու իրավունք միայն՝

ա) այն անդամ պետության ՊՊԿ-ին, որի համար են այդ պաշարները պահվում.

բ) մեկ կամ մի քանի այլ ՊՊԿ-ների, որոնք նախօրոք հայտարարել են այդպիսի պաշարներ պահելու իրենց ցանկության մասին, պայմանով, որ այդ պատվիրակումները նախապես թույլատրված են թե՛ այն անդամ պետության կողմից, որի համար են այդ պաշարները պահվում, ինչպես նաև այն բոլոր անդամ պետությունների կողմից, որոնց տարածքներում դրանք պետք է պահվեն.

գ) այլ տնտեսվարող սուբյեկտների, որոնք ունեն ավելցուկային պաշարներ կամ պաշարների պահպանման համար անհրաժեշտ տարողություն՝ այն անդամ պետության տարածքից դուրս, որի համար են այդ պաշարները պահվում՝ պայմանով, որ այդ պատվիրակումները նախապես թույլատրված են թե՛ այն անդամ պետության կողմից, որի համար են այդ պաշարները պահվում, ինչպես նաև այն բոլոր անդամ պետությունների կողմից, որոնց տարածքներում դրանք պետք է պահվեն և (կամ).

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների, որոնք ունեն ավելցուկային պաշարներ կամ պաշարների պահպանման համար անհրաժեշտ տարողություն՝ այն անդամ պետության տարածքում, որի համար են այդ պաշարները պահվում՝ պայմանով որ այդ պատվիրակման մասին նախապես հայտնվել է այդ անդամ պետությանը: Անդամ պետությունները այդ պարտավորությունների մասով կարող են սահմանել սահմանափակումներ կամ պայմաններ:

գ) և դ) կետերի համաձայն փոխանցված պարտավորությունները չեն կարող մեկ այլ անձի փոխանցվել: բ) և գ) կետերում նշված պատվիրակման փոփոխված կամ դրա ընդլայնված տարբերակը ուժի մեջ է մտնում բոլոր այն անդամ պետությունների թույլտվության դեպքում, որոնք նախապես թույլատրել են այդ պատվիրակումը: դ) կետում նշված պատվիրակման փոփոխված կամ դրա ընդլայնված տարբերակը դիտվում է որպես նոր պատվիրակում:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է սահմանափակել այն տնտեսվարող սուբյեկտների պատվիրակման իրավունքները, որոնց համար իր կողմից սահմանվել են պաշարների պահպանման հետ կապված պարտավորություններ:

Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտի պատվիրակման իրավունքները սահմանափակվում են պաշարների պահպանման մասով վերջինիս համար սահմանված պարտավորությունների 10 %-ից պակաս չափով, անդամ պետությունը ապահովում է, որպեսզի վերջինիս կողմից հիմնվի ՊՊԿԿ, որից կպահանջվի ընդունել այդ պատվիրակումն այն չափով, որն առնվազն անհրաժեշտ է տնտեսվարող սուբյեկտի համար պաշարների պահպանման մասով սահմանված պարտավորությունների 10 %-ի պատվիրակման իրավունքը երաշխավորելու համար:

Սույն պարբերության մեջ նշված 10 % նվազագույն սահմանաչափը մինչ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է հասցվի մինչև 30 %-ի:

3. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ անդամ պետությունը կարող է տնտեսվարող սուբյեկտի համար սահմանել պաշարների պահպանման հետ կապված վերջինիս պարտավորությունների առնվազնի մի մասը անդամ պետության ՊՊԿԿ-ին փոխանցելու պարտավորություն:

4. Անդամ պետությունները ձեռնարկում են տնտեսվարող սուբյեկտների համար պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանման ընթացքում կիրառվող եղանակների վերաբերյալ վերջիններիս տեղեկացնելուն ուղղված անհրաժեշտ միջոցներ՝ համապատասխան պարտավորության ստանձնման ժամկետի մեկնարկից ոչ ուշ քան 200 օր առաջ: Տնտեսվարող սուբյեկտները կիրառում են ՊՊԿԿ-ներին պաշարների պահպանման հետ կապված պարտավորություններ փոխանցելու իրենց իրավունքը՝ համապատասխան պարտավորության ստանձնման ժամկետի մեկնարկից ոչ ուշ քան 170 օր առաջ:

Տնտեսվարող սուբյեկտներին պաշարների պահպանման հետ կապված պարտավորության մասին դրա ստանձնման ժամկետի մեկնարկից ավելի շուտ քան 200 օր առաջ տեղեկացնելու դեպքում վերջիններս կարող են կիրառել այդ պարտավորությունը փոխանցելու իրենց իրավունքը:

Հոդված 9

Հատուկ պաշարները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է ստանձնել նավթի պաշարների նվազագույն ծավալի պահպանումը, որը հաշվարկվում է ելնելով սպառման օրերի թվից՝ սույն հոդվածով սահմանված պայմանների համաձայն:

Հատուկ պաշարները պետք է հանդիսանան անդամ պետության կամ վերջինիս կողմից հիմնված ՊՊԿ-ի սեփականությունը և պահպանվեն Համայնքի տարածքում:

2. Հատուկ պաշարները կարող են բաղկացած լինել հետևյալ ապրանքների մեկ կամ մի քանի կատեգորիաներից, ինչպես սահմանված է թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Բ հավելվածի 4-րդ բաժինում՝

-էթան,

- հեղուկացված նավթային գազ (ՀՆԳ),

- շարժիչային բենզին,

-ավիոբենզին,

- բենզինային ռեակտիվ վառելիք (լիգրոին տեսակի ռեակտիվ վառելիք կամ JP4),

-կերոսին տեսակի ռեակտիվ վառելիք,

- այլ տեսակի կերոսին,

-գազային/դիզելային յուղ (թորված նավթային վառելիք),

-նավթային վառելիք (ծծմբի բարձր պարունակությամբ և ծծմբի ցածր պարունակությամբ),

- ուայթ-սպիրիտ (լաքաներկային լուծիչ) և SBP,

- քսայուղեր,

- բիտում,

- պարաֆին,

- նավթի կոքս

3. Նավթամթերքներից ձևավորված հատուկ պաշարները յուրաքանչյուր անդամ պետության կողմից նույնականացվում են 2-րդ պարբերության մեջ թվարկված կատեգորիաների համաձայն: Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի 3-րդ հոդվածով սահմանված կանոնների համաձայն որոշված բազային տարում, կիրառվող կատեգորիաներում ներառված ապրանքների մասով անդամ պետությունում սպառված քանակությունները, որոնք արտահայտվում են չմշակված նավթի համարժեքով, առնվազն հավասար լինեն II հավելվածում ներկայացված եղանակով հաշվարկված ներքին սպառման 75 %-ին:

3-րդ հոդվածում ներկայացված կանոնների համաձայն անդամ պետության կողմից ընտրված յուրաքանչյուր կատեգորիայի հատուկ պաշարները, որոնց պահպանումը ստանձնվում է այդ անդամ պետության կողմից, պետք է համապատասխանեն համապատասխան թվով օրերի կտրվածքով օրական սպառման՝ բազային տարվա ընթացքում դրանց չմշակված նավթի համարժեքի հիման վրա որոշված միջին արժեքով հաշվարկված քանակությանը:

Առաջին և երկրորդ ենթապարբերություններում նշված չմշակված նավթի համարժեքները հաշվարկվում են կիրառվող կամ համապատասխան կատեգորիաներում ներառված ապրանքների ընդհանուր քանակության 1,2 գործակցի բազմապատկմամբ, ընդհանուր քանակությունը թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Գ հավելվածի 3.2.1 բաժնով սահմանվածի համաձայն դիտարկվում է որպես «համախառն ներքին մատակարարում»: Միջազգային ծովագնացության նավերի լցավորման համար օգտագործված վառելիքի քանակությունները չեն ներառվում հաշվարկի մեջ:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն, որը հատուկ պաշարներ պահպանելու որոշում է կայացրել, Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրատարակելու նպատակով Հանձնաժողովին հայտագիր է ուղարկում, ուր նշված են այդ պաշարների այն ծավալները, որոնք վերջինս հանձն է առել պահպանել, ինչպես նաև դրանց պահպանման տևողությունը, որը պետք է լինի առնվազն 1 տարի: Նշված նվազագույն ծավալը հավասարապես կիրառվում է հատուկ պաշարների՝ անդամ պետության կողմից կիրառվող բոլոր կատեգորիաների նկատմամբ:

Անդամ պետությունն ապահովում է, որպեսզի այդ պաշարները պահպանվեն նշված ամբողջ ժամանակահատվածում՝ չհակասելով անդամ պետության՝ բացառապես պաշարների նորացման անհատական գործընթացով պայմանավորված ժամանակավոր կրճատումներ կատարելու իրավունքին:

Անդամ պետության կողմից կիրառվող կատեգորիաների ցանկը պետք է մնա ուժի մեջ առնվազն 1 տարի և դրա փոփոխությունը այդուհետ կարող է ուժի մեջ մտնել ցանկացած օրացույցային ամսվա առաջին օրը:

5. Յուրաքանչյուր անդամ պետություն, որը չի պարտավորվել հատուկ պաշարները պահպանել համապատասխան օրացույցային ամբողջ տարվա ընթացքում, փոխարենը պարտավորվել է դրանք պահպանել առնվազն 30 օր, երաշխավորում է պաշարների

պահպանման հետ կապված իր պարտավորությունների առնվազն մեկ երրորդի ապահովումը 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն կազմված ապրանքների տեսքով:

Ցանկացած անդամ պետություն, որի համար հատուկ պաշարները պահվում են 30 օրից պակաս ժամանակով, կազմում է տարեկան հաշվետվություն, որտեղ վերլուծում է իր ազգային մարմինների կողմից 5-րդ հոդվածում նշված իր վթարային պաշարների հասանելիության ու ֆիզիկական մատչելիության ապահովմանն ու ստուգմանն ուղղված միջոցները և միևնույն հաշվետվության մեջ փաստաթղթերով հիմնավորում է այն միջոցառումները, որոնք անց են կացվել անդամ պետությանը թույլ տալու համար, որպեսզի վերջինս նավթի մատակարարման խափանումների դեպքում վերահսկի այդ պաշարների օգտագործումը: Այդ հաշվետվությունն ուղարկվում է Հանձնաժողովին մինչ տվյալ օրացույցային տարվա առաջին ամսվա ավարտը:

Հոդված 10

Հատուկ պաշարների կառավարումը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում պահվող բոլոր հատուկ պաշարների մասով վարում է շարունակաբար թարմացվող և մանրամասն գրանցամատյան: Այդ գրանցամատյանը, մասնավորապես, պարունակում է տվյալ պաշարների ճշգրիտ գտնվելու վայրը հստակ պարզելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

Անդամ պետությունները Հանձնաժողովի պահանջի դեպքում 15 օրվա ընթացքում վերջինիս են ուղարկում նաև գրանցամատյանի օրինակը: Այս օրինակում պաշարների գտնվելու վայրի հետ կապված հատուկ տվյալները կարող են ներկայացված չլինել: Այդօրինակ պահանջներ կարող են ներկայացվել, ոչ ուշ քան 5 տարի անց այն ժամանակահատվածից, որին վերաբերում են պահանջվող տվյալները:

2. Այն դեպքում, երբ հատուկ պաշարները պահվում են վերջիններիս քանակությանը համարժեք նավթի այլ պաշարների հետ, անդամ պետությունները կամ դրանց ՊՊԿԿ-ները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում հատուկ պաշարների սեփականատիրոջ և այն անդամ պետության, որի տարածքում են գտնվում այդ պաշարները, իշխանությունների կամ վերջինիս կողմից հիմնված ՊՊԿԿ-ի կողմից, նախօրոք գրավոր թույլտվության բացակայության դեպքում միասին պահվող ապրանքների տեղափոխումը կանխելու ուղղությամբ:

3. Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք ուղղված են իրենց տարածքում պահպանվող կամ իրենց տարածքով փոխադրվող բոլոր հատուկ պաշարներին հարկադիր բնույթի գործողությունների նկատմամբ լիարժեք անձեռնմխելիություն շնորհելուն՝ անկախ այն հանգամանքից՝ այդ պաշարները հանդիսանում են իրենց, թե այլ անդամ պետության սեփականությունը:

Հոդված 11

Պատվիրակման ազդեցությունը

7-րդ և 8-րդ հոդվածներում նշված պատվիրակումները ոչ մի կերպ չեն փոփոխում սույն Հրահանգի համաձայն յուրաքանչյուր անդամ պետության վրա դրված պարտավորությունները:

Հոդված 12

3-րդ հոդվածով կարգավորվող պաշարների վիճակագրական ամփոփագրերը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում է 3-րդ հոդվածի համաձայն պահվող պաշարների ծավալների մասով վիճակագրական ամփոփագրեր և դրանք Հանձնաժողովին է ներկայացնում IV հավելվածում նշված կանոնների համաձայն:

2. 1-ին պարբերության մեջ նշված ամփոփագրերի կազմման կանոնները, դրանց գործողության շրջանակը, բովանդակությունը, դրանք ներկայացնելու հաճախականությունը և վերջնաժամկետները կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն: Այդ ամփոփագրերը Հանձնաժողովին ներկայացնելու կանոնները ևս կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

3. Անդամ պետությունները կարող են չմշակված նավթի կամ նավթամթերքների առգրավման կամ հարկադիր բնույթի գործողության ենթակա քանակությունները չներառել վթարային պաշարների վիճակագրական ամփոփագրերում: Դա վերաբերում է նաև այն պաշարներին, որոնք հանդիսանում են սնանկ ճանաչված կամ պարտատերերի հետ պայմանավորվածություն ունեցող ընկերությունների սեփականությունը:

Հատուկ պաշարների վիճակագրական ամփոփագրերը

1. Յուրաքանչյուր համապատասխան անդամ պետություն կազմում և Հանձնաժողովին է ներկայացնում յուրաքանչյուր ապրանքի կատեգորիայի մասով վիճակագրական ամփոփագիր, որում ներկայացված են յուրաքանչյուր օրացույցային ամսվա վերջին օրվա դրությամբ առկա հատուկ պաշարների քանակությունները և բազային տարում այդ պաշարների օրական սպառման միջին արժեքով արտահայտված օրերի քանակը: Այն դեպքում, երբ այդ հատուկ պաշարներից որոշները պահվում են անդամ պետության տարածքից դուրս, այն տրամադրում է տարբեր անդամ պետությունների և համապատասխան ՊՊԿԿ-ների կողմից պահպանվող պաշարների վերաբերյալ մանրամասներ: Այն նաև տրամադրում է մանրամասն նշում այն մասին՝ արդյոք այն հանդիսանում է պաշարների ամբողջ քանակության սեփականատերը, թե այդ պաշարներն ամբողջությամբ կամ մասամբ ՊՊԿԿ-ի սեփականությունն են:

2. Յուրաքանչյուր համապատասխան անդամ պետություն կազմում և Հանձնաժողովին է ներկայացնում իր տարածքում գտնվող և այլ անդամ պետության կամ ՊՊԿԿ-ի սեփականությունը հանդիսացող հատուկ պաշարների վերաբերյալ ամփոփագիր, որում ներկայացված են յուրաքանչյուր օրացույցային ամսվա վերջին օրվա դրությամբ առկա պաշարների քանակությունը՝ բաժանված ըստ 9(4) հոդվածի համաձայն սահմանված ապրանքների կատեգորիաների: Այդ ամփոփագրի մեջ անդամ պետությունը յուրաքանչյուր դեպքի առնչությամբ նշում է նաև համապատասխան անդամ պետության կամ ՊՊԿԿ-ի, ինչպես նաև ներառված քանակությունների մասին:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված վիճակագրական ամփոփագրերը ներկայացվում են այն ժամանակահատվածին հաջորդող օրացույցային ամսվա ընթացքում, որի կտրվածքով են դրանք կազմված:

4. Վիճակագրական ամփոփագրերի օրինակներն անմիջապես ուղարկվում են Հանձնաժողովին՝ վերջինիս պահանջի դեպքում: Այդօրինակ պահանջներ կարող են ներկայացվել, ոչ ուշ քան 5 տարի անց այն ժամանակահատվածից, որին վերաբերում են այդ տվյալները:

5. Գործողության շրջանակը, բովանդակությունը, վիճակագրական ամփոփագրեր ներկայացնելու հաճախականությունը և վերջնաժամկետները կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն: Այդ ամփոփագրերը

Հանձնաժողովին ներկայացնելու կանոնները ևս կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 14

Առևտրային պաշարների ամփոփագրերը

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում իրենց ազգային տարածքում պահվող առևտրային պաշարների ծավալների վերաբերյալ ամսական կտրվածքով կազմված վիճակագրական ամփոփագիր: Այդ դեպքում անդամ պետությունները ապահովվում են հատուկ տվյալների պաշտպանվածությունը՝ ձեռնպահ մնալով համապատասխան պաշարների սեփականատերերի անունները հիշատակելուց:
2. Հանձնաժողովը հրապարակում է Համայնքում առկա առևտրային պաշարների վերաբերյալ ամսական կտրվածքով կազմված վիճակագրական ամփոփագիր՝ հիմնվելով անդամ պետությունների կողմից ներկայացված ամփոփագրերի վրա և հաշվի առնելով այդ պաշարների ծավալների ընդհանուր քանակությունը:
3. Վիճակագրական ամփոփագրերը հրապարակելու և ներկայացնելու կանոնները, ինչպես նաև դրանք ներկայացնելու հաճախականությունը կարող է փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 15

Տվյալների մշակումը

Հանձնաժողովը պատասխանատու է զարգացնելու, սպասարկելու, կառավարելու և իրագործելու համար ԵՏՀ ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են վիճակագրական ամփոփագրերում ներկայացված տվյալները, սույն Հրահանգի համաձայն անդամ պետությունների կողմից տրամադրված ու Հանձնաժողովի կողմից հավաքված մյուս ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն Հրահանգով պահանջվող ամփոփագրերը կազմելու նպատակով նավթի պաշարների մասին թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) համաձայն հավաքված անհրաժեշտ ցանկացած տվյալ ստանալու, պահելու և մշակելու համար:

Հոդված 16

Բիովառելիքները և հավելանյութերը

1. 3-րդ և 9-րդ հոդվածների համաձայն պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանման ժամանակ, բիովառելիքները և հավելանյութերը հաշվի են առնվում միայն համապատասխան նավթամթերքների հետ խառնված լինելու դեպքում:

2. Փաստացի պահպանվող պաշարների ծավալները հաշվարկելիս բիովառելիքները և հավելանյութերը հաշվի են առնվում, երբ՝

ա) դրանք խառնվել են համապատասխան նավթամթերքների հետ կամ

բ) դրանք պահեստավորված են համապատասխան անդամ պետության տարածքում, պայմանով, որ անդամ պետությունն ընդունել է կանոններ, որոնցով ապահովվում է դրանց խառնումը պաշարների պահպանման՝ սույն Հրահանգում ներկայացված պահանջների համաձայն պահվող նավթամթերքների հետ, և որ դրանք կկիրառվեն տրանսպորտի ոլորտում:

3. Պաշարների պահպանման հետ կապված պարտավորությունների սահմանման և պաշարների ծավալների հաշվարկման ընթացքում բիովառելիքները և հավելանյութերը հաշվի առնելու վերաբերյալ 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված կանոնները, կարող են փոփոխվել 23(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 17

Նավթի և նավթամթերքների հարցերով Համակարգող խումբը

1. Սույնով ստեղծվում է նավթի և նավթամթերքների հարցերով Համակարգող խումբ (այսուհետ՝ «Համակարգող խումբ»): Համակարգող խումբը խորհրդակցական խումբ է, որը օժանդակում է Համայնքի ներսում նավթի և նավթամթերքների մատակարարման անխափանության մասով տիրող իրավիճակի վերլուծությանը և նպաստում է այդ ոլորտում միջոցառումների համակարգմանն ու իրականացմանը:

2. Համակարգող խումբը բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից: Այն նախագահվում է Հանձնաժողովի կողմից: Համապատասխան ոլորտի ներկայացուցչական

մարմինները Հանձնաժողովի հրավերով կարող են մասնակցել Համակարգող խմբի աշխատանքներին:

Հոդված 18

Վթարային իրավիճակների դեպքում պատրաստվածության ստուգումը և պաշարների պահպանումը

1. Հանձնաժողովը կարող է անդամ պետությունների հետ համաձայնեցված կարգով իրականացնել ստուգումներ՝ նպատակաուղղված վերջիններիս պատրաստվածության, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նպատակահարմար գտնվելու դեպքում՝ պաշարների պահպանման ստուգմանը: Այդօրինակ ստուգումների նախապատրաստվելիս Հանձնաժողովը հաշվի է առնում այլ հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կողմից գործադրված ջանքերը և խորհրդակցում է Համակարգող խմբի հետ:

2. Համակարգող խումբը կարող է իր հավանությունը տալ լիազորված գործակալների և մյուս անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությանը՝ ստուգման գործընթացին: Ստուգում անցած անդամ պետության նշանակված պետական պաշտոնյաները կարող են ընկերակցել ստուգում անցկացնող անձանց: 1-ին պարբերության մեջ նշված ստուգման հայտարարմանը հաջորդող 1 շաբաթվա ընթացքում ցանկացած համապատասխան անդամ պետություն, որը 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն Հանձնաժողովին չի տրամադրել պաշարների գտնվելու վայրի վերաբերյալ հատուկ տվյալներ, կարող է այդ տեղեկատվությունը տրամադրել Հանձնաժողովի աշխատակիցներին կամ լիազորված գործակալներին:

3. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի իրենց համապատասխան մարմինները և նրանք, ովքեր պատասխանատու են վթարային և հատուկ պաշարների պահպանման համար, համաձայնեն այդ զննումներին և օժանդակեն Հանձնաժողովի կողմից լիազորված անձանց կողմից այդ ստուգումների անցկացմանը: Անդամ պետությունները, մասնավորապես, ապահովում են, որպեսզի այդ անձանց շնորհիվ պաշարներին վերաբերող բոլոր փաստաթղթերից և գրանցամատյաններից տեղեկություններ հավաքելու իրավունք և որպեսզի վերջիններս մուտքի իրավունք ունենան բոլոր համապատասխան փաստաթղթեր և բոլոր այն վայրեր, որտեղ պահվում են այդ պաշարները:

4. Սույն հոդվածի համաձայն կատարված ստուգման արդյունքի մասին ծանուցվում է ստուգում անցած անդամ պետությանը իսկ այդ արդյունքը կարող է ուղարկվել Համակարգող խմբին:

5. Անդամ պետությունները և Հանձնաժողովը ապահովում են, որպեսզի Հանձնաժողովի վերահսկողության ներքո աշխատող պաշտոնյաները, գործակալները և այլ անձիք, ինչպես նաև Համակարգող խմբի անդամները կարողանան հրապարակել սույն հոդվածի համաձայն հավաքված կամ փոխանակված ցանկացած կամ իր բնույթի համաձայն մասնագիտական գաղտնիությամբ կարգավորվող տեղեկատվություն, ինչպիսին է, օրինակ, պաշարների սեփականատերերի ինքնությունը:

6. 1-ին պարբերության մեջ նշված ստուգումների նպատակները չեն կարող ներառել անձնական տվյալների մշակումը: Այդ ստուգումների ընթացում գտնված կամ բացահայտված ցանկացած անձնական տվյալ չի կարող հավաքվել կամ հաշվի առնվել, իսկ եթե այն հավաքվել է պատահաբար, պետք է անմիջապես ոչնչացվի:

7. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որպեսզի վթարային և հատուկ պաշարներին առնչվող բոլոր տվյալները, արձանագրությունները, ամփոփագրերը և փաստաթղթերը պահվեն առնվազն 5 տարի ժամկետով:

Հոդված 19

Անձանց պաշտպանությունը տվյալների մշակման մասով

Սույն Հրահանգը չի հակասում և ոչ մի կերպ չի ազդում համայնքի և ազգային իրավունքի դրույթներով նախատեսված անձնական տվյալների մշակման մասով անձանց պաշտպանության մակարդակի վրա և մասնավորապես, չի փոփոխում 95/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ անդամ պետությունների պարտավորությունները անձնական տվյալների մշակման մասով կամ թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգով Միության հաստատությունների ու մարմինների վրա անձնական տվյալների մշակման մասով դրված պարտավորությունները՝ դրանց կատարման ընթացքում:

Արտակարգ իրավիճակի դեպքում կիրառվող ընթացակարգերը

1. Անդամ պետություններն ապահովում են գործող ընթացակարգերի առկայությունը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որոնք մատակարարման խոշոր խափանման դեպքում վերջիններիս իրավասու մարմիններին հնարավորություն կտան անհապաղ, արդյունավետ և թափանցիկ կերպով ամբողջությամբ կամ մասամբ բաց թողնել իրենց վթարային և հատուկ պաշարները, ինչպես նաև հնարավորություն կտան պակասուրդի հաշվարկված չափին համարժեք ընդհանուր կամ հատուկ սահմանափակումներ սահմանել սպառման մասով, մասնավորապես, նավթամթերքները առաջնայնության սկզբունքով բաշխելով օգտագործողների որոշակի խմբերի:

2. Անդամ պետությունները մշտապես ունեն անկանխատեսելի դեպքերի ծրագրեր, որոնք կիրառվում են մատակարարման խոշոր խափանման դեպքում, ինչպես նաև նախատեսում են կազմակերպական միջոցներ, որոնց ձեռնարկումը հնարավորություն է տալիս իրականացնել այդ ծրագրերը: Պահանջի դեպքում՝ անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են անկանխատեսելի դեպքերի ծրագրերի և համապատասխան կազմակերպական միջոցառումների մասին:

3. Մեկ կամ մի քանի անդամ պետությունների վրա ազդող պաշարների բացթողման մասին միջազգային գործող որոշման դեպքում՝

ա) համապատասխան անդամ պետությունները այդ որոշմամբ սահմանված իրենց պարտավորությունները կատարելու համար կարող են օգտագործել իրենց վթարային և հատուկ պաշարները: Ցանկացած անդամ պետություն այդպես վարվելու դեպքում անմիջապես ծանուցում է Հանձնաժողովին, որպեսզի վերջինս կարողանա համակարգող խմբի ժողով հրավիրել կամ էլեկտրոնային միջոցներով խորհրդակցել իր անդամների հետ՝ մասնավորապես պաշարների բացթողման հետևանքը գնահատելու նպատակով:

բ) Հանձնաժողովը կարող է անդամ պետություններին առաջարկել, որպեսզի վերջիններս ամբողջությամբ կամ մասամբ բաց թողնեն իրենց վթարային և հատուկ պաշարները կամ հարմար գտնելու դեպքում ձեռնարկեն համարժեք ազդեցության այլ միջոցներ: Հանձնաժողովը կարող է գործել միայն Համակարգող խմբի հետ խորհրդակցելուց հետո:

4. Պաշարների բացթողման մասին միջազգային գործող որոշման բացակայության հանգամանքում և Համայնքին ու անդամ պետություններին չմշակված նավթ կամ

նավթամթերքներ մատակարարելու հետ կապված դժվարություններ ծագելիս Հանձնաժողովը, հարկ եղած դեպքում, տեղեկացնում է ՄԷԳ-ին և պատշաճ կերպով համաձայնեցնում է ամենը վերջինիս հետ, ինչպես նաև կա՛մ անդամ պետության պահանջով և կա՛մ սեփական նախաձեռնությամբ հնարավորինս շուտ կազմակերպում է խորհրդակցություններ Համակարգող խմբի հետ: Այն դեպքում, երբ Համակարգող խմբի հետ խորհրդակցություն անցկացնելը անդամ պետության պահանջն է, ապա այն պետք է կազմակերպվի պահանջը ստանալուց հետո՝ առավելագույնը 4 օրվա ընթացքում, քանի դեռ անդամ պետությունը չի համաձայնել ավելի երկար ժամանակ սահմանել: Համակարգող խմբի կողմից իրավիճակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա Հանձնաժողովը որոշում է՝ արդյոք տեղի է ունեցել մատակարարման խոշոր խափանում, թե՛ ոչ:

Այն դեպքում, երբ ենթադրվում է որ տեղի է ունեցել մատակարարման խոշոր խափանում, Հանձնաժողովը թույլատրում է ամբողջությամբ կամ մասամբ բաց թողնել համապատասխան անդամ պետության կողմից այդ նպատակով առաջարկվող վթարային կամ հատուկ պաշարները:

5. Անդամ պետությունները կարող են վթարային կամ հատուկ պաշարները բաց թողնել սույն Հրահանգով սահմանված պարտադիր նվազագույն ծավալից պակաս՝ առանձնահատուկ հրատապության դեպքերում սկզբնական արձագանքի համար անհրաժեշտ չափով կամ տեղական ճգնաժամին դիմագրավելու նպատակով: Պաշարների բացթողման դեպքում անդամ պետությունները Հանձնաժողովին անմիջապես տեղեկացնում են բացթողված պաշարների քանակության մասին: Հանձնաժողովն այդ տեղեկատվությունն ուղարկում է Համակարգող խմբի անդամներին:

6. 3-րդ, 4-րդ, կամ 5-րդ պարբերությունների կիրառման դեպքում անդամ պետությունները կարող են իրեն պաշարները ժամանակավորապես պահել սույն Հրահանգով սահմանվածից պակաս ծավալներով: Այդ դեպքում Հանձնաժողովը, Համակարգող խմբի հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա, ՄԷԳ-ի հետ համաձայնեցված կարգով և մասնավորապես, նավթի և նավթամթերքների միջազգային շուկաներում տիրող իրավիճակը հաշվի առնելով, հարկ եղած դեպքում սահմանում է ողջամիտ ժամկետ, որի ընթացքում անդամ պետությունները պետք է իրենց պաշարները վերականգնեն պահանջվող նվազագույն ծավալների համաձայն:

7. Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի ուժով կայացված որոշումները չեն հակասում համապատասխան անդամ պետությունների վրա դրված որևէ միջազգային պարտավորության:

Հոդված 21

Տույժերը

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող տույժերի վերաբերյալ կանոնները և ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ դրանք գործողության մեջ դնելու համար: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ: Անդամ պետությունները այս դրույթների մասին Հանձնաժողովին տեղեկացնում են մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 22

Վերանայումը

Մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը պետք է հրապարակի սույն Հրահանգի գործունեությունը և կիրարկումը:

Հոդված 23

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Այն դեպքերում, երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները:

Հոդված 24

Ուժը կորցրած ճանաչելը

73/238/ԵՏՀ և 2006/67/ԵՀ հրահանգները և 68/416/ԵՏՀ որոշումը սույնով ուժը կորցրած են ճանաչվում 2012 թվականի դեկտեմբերի 31-ից:

Ուժը կորցրած հրահանգներին և որոշմանը կատարվող հղումները մեկնաբանվում են որպես հղումներ սույն Հրահանգին:

Հոդված 25

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները ուժի մեջ են մտցնում սույն հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները ոչ ուշ, քան 2012թ. դեկտեմբերի 31-ը:

Շեղում կատարելով 1-ին ենթապարբերության դրույթներից՝ այն անդամ պետությունները, որոնք մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը չեն դառնա ՄԷԳ-ի անդամ, և որոնց կողմից նավթամթերքների ներքին սպառումն ամբողջությամբ կախված է ներկրումներից, ուժի մեջ են մտցնում սույն Հրահանգի 3(1) հոդվածի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են փոխանցում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 26

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 27

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի սեպտեմբերի 14-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Ց. Մալմստրյոմ

[1] 2009 թվականի ապրիլի 22-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[2] 2009 թվականի մայիսի 13-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[3] ՊՏ C 128, 06.06.2009թ., էջ 42:

[4] ՊՏ L 217, 08.08.2006թ., էջ 8:

[5] ՊՏ L 304, 14.11.2008թ., էջ 1:

[6] ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

[7] ՊՏ L 8, 12.01.2001թ., էջ 1:

[8] ՊՏ L 228, 16.08.1973թ., էջ 1:

[9] ՊՏ L 308, 23.12.1968թ., էջ 19:

[10] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ՉՄՇԱԿՎԱԾ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Նավթամթերքների ներկրումների՝ 3-րդ հոդվածում նշված չմշակված նավթի համարժեքը պետք է հաշվարկվի հետևյալ եղանակով՝

Նավթամթերքների ներկրումների՝ չմշակված նավթի համարժեքը ստացվում է չմշակված նավթի զուտ ներկրումների, հեղուկ բնական գազի, նավթամշակման հումքի և թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Բ հավելվածի 4-րդ բաժնով սահմանված այլ ածխաջրածինների գումարի հաշվարկման արդյունքում, արդյունքը պաշարների հետ կապված ցանկացած փոփոխության հետ հարմարեցնելու համար, 4 %-ով կրճատվում է նավթի թեթև ֆրակցիաների ստացման արժեքը (իսկ ազգային տարածքում նավթի թեթև ֆրակցիաների արտադրության միջին արժեքը 7 %-ից բարձր լինելու դեպքում կրճատվում է դրանց զուտ փաստացի սպառումը կամ դրանց ստացման միջին արժեքը) և դա ավելացվում է նավթի թեթև ֆրակցիաներից բացի մյուս բոլոր նավթամթերքների զուտ ներկրման արժեքին, որը ևս հարմարեցվել պաշարների հետ կապված փոփոխություններին, և բազմապատկվում է 1,065 գործակցով:

Միջազգային ծովագնացության նավերի լցավորման համար օգտագործված վառելիքի քանակությունները չեն ներառվում հաշվարկի մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՉՄՇԱԿՎԱԾ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

3-րդ հոդվածի նպատակով ներքին սպառման չմշակված նավթի համարժեքը պետք է հաշվարկվի հետևյալ եղանակով՝

Ներքին սպառումը, ինչպես սահմանված է թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Գ հավելվածի 3.2.1 բաժնով, միայն հետևյալ ապրանքների համախառն ներքին մատակարարումների ընդհանուր քանակի գումարն է՝ շարժիչային բենզին, ավիոբենզին, բենզինային ռեակտիվ վառելիք (լիգրոին տեսակի ռեակտիվ վառելիք կամ JP4), կերոսին տեսակի ռեակտիվ վառելիք, այլ տեսակի կերոսին, գազային/դիզելային յուղ (թորված նավթային վառելիք), նավթային վառելիք (ծծմբի բարձր պարունակությամբ և ծծմբի ցածր պարունակությամբ), ինչպես սահմանված է թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Բ հավելվածի 4-րդ բաժնով:

Միջազգային ծովագնացության նավերի լցավորման համար օգտագործված վառելիքի քանակությունները չեն ներառվում հաշվարկի մեջ:

Ներքին սպառման չմշակված նավթի համարժեքը հաշվարկվում է 1,2 գործակցի բազմապատկմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՊԱՀՎՈՂ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Պաշարների ծավալների հաշվարկման նպատակով կիրառվում են հետևյալ եղանակները՝ չհակասելով 4(3) հոդվածում նշվածին, ոչ մի քանակություն մեկ անգամից ավել պաշարի հաշվարկի մեջ չի կարող ներառվել:

Չմշակված նավթի պաշարները կրճատվում են 4 %-ով, որը համապատասխանում է նավթի թեթև ֆրակցիաների ստացման միջին արժեքին:

Միջազգային ծովագնացության նավերի համար նախատեսված նավթի թեթև ֆրակցիաների և նավթամթերքների պաշարները չեն ներառվում հաշվարկի մեջ:

Ներքոնշյալ երկու եղանակների կիրառման արդյունքում մյուս նավթամթերքները ներառվում են պաշարների հաշվարկի մեջ: Անդամ պետությունները պետք է շարունակեն կիրառել այն եղանակը, որից նրանք օգտվել են օրացույցային ամբողջ տարվա ընթացքում:

Անդամ պետությունները կարող են՝

ա) ներառել թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) Գ հավելվածի 3.1 բաժնի առաջին պարբերությամբ սահմանված նավթամթերքների մյուս բոլոր պաշարները և դրանց չմշակված նավթի համարժեքը հաշվարկել վերջիններիս քանակությունները 1,065 գործակցով բազմապատկելով կամ

բ) ներառել միայն հետևյալ ապրանքների պաշարները՝ շարժիչային բենզին, ավիոբենզին, բենզինային ռեակտիվ վառելիք (լիգրոին տեսակի ռեակտիվ վառելիք կամ JP4), կերոսին տեսակի ռեակտիվ վառելիք, այլ տեսակի կերոսին, գազային/դիզելային յուղ (թորված նավթային վառելիք), նավթային վառելիք (ծծմբի բարձր պարունակությամբ և ծծմբի ցածր պարունակությամբ) և դրանց չմշակված նավթի համարժեքը հաշվարկել վերջիններիս քանակությունները 1,2 գործակցով բազմապատկելով:

Հաշվարկում կարող են ներառվել ներքոնշյալ քանակությունները՝

- թորման ավազանի,
- բալք տերմինալների,
- խողովակաշարի ռեզերվուարի,
- բեռնանավերի,
- միջափային տանկերների,
- նավահանգստում գտնվող նավթի տանկերների,
- ներքին նավագնացության նավերի բունկերների,
- նավթամթերքների պահպանման ավազանի նստվածքների,
- ընթացիկ պաշարների,
- խոշոր սպառողների կողմից օրենքի պահանջով պահվող քանակությունները, որոնք վերահսկվում են կառավարության կողմից:

Այնուամենայնիվ, այդ քանակությունները՝ բացի թորման ավազաններում, խողովակաշարի ռեզերվուարի մեջ կամ բալք տերմինալներում պահվող ցանկացած քանակության, չեն կարող ներառվել հատուկ պաշարների հաշվարկներում այն դեպքում, երբ վերջիններս հաշվարկվում են վթարային պաշարներից առանձին:

Հաշվարկում երբեք չեն կարող ներառվել՝

ա) դեռևս չարտադրված չմշակված նավթ.

բ) քանակությունները, որոնք պահվում են՝

-խողովակաշարերում.

- երկաթգծային ցիստեռներում.

- ծովային նավերի բունկերներում.

- լցակայաններում և մանրածախ վաճառքի կետերում.

- այլ սպառողների կողմից.

- ծովում գտնվող տանկերներում.

- ռազմական պաշարներում:

Անդամ պետություններն իրենց պաշարները հաշվարկելիս վերոնշյալի համաձայն հաշվարկված պաշարների քանակությունները պետք է կրճատեն 10 %-ով: Կրճատումը կիրառվում է տվյալ հաշվարկում ներառված բոլոր քանակությունների նկատմամբ:

Սակայն, հատուկ պաշարների կամ հատուկ պաշարների տարբեր կատեգորիաների ծավալները վթարային պաշարներից առանձին հաշվարկելու դեպքում 10 %- ի կրճատման եղանակը չի կիրառվում, դա արվում է, մասնավորապես, 9-րդ հոդվածով սահմանված պաշարների նվազագույն ծավալների հետ վերջիններիս համապատասխանությունը ստուգելու նպատակով:

**3-րդ հոդվածի համաձայն պահվող պաշարների վերաբերյալ վիճակագրական
ամփոփագրեր պատրաստելու և Հանձնաժողովին ներկայացնելու կանոնները**

Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է կազմի և ամսական կտրվածքով Հանձնաժողովին ներկայացնի օրացույցային ամսվա վերջին օրվա դրությամբ փաստացի պահվող պաշարների ծավալների վերաբերյալ վիճակագրական ամփոփագիր, 3-րդ հոդվածի համաձայն այդ պաշարները պետք է հաշվարկվեն կամ օրերի կտրվածքով հաշվարկված նավթի զուտ ներկրումների ծավալների կամ օրերի կտրվածքով հաշվարկված նավթի ներքին սպառման ծավալների հիման վրա: Վիճակագրական ամփոփագրով պետք է ապահովվեն ճշգրիտ մանրամասներ վերոնշյալ հաշվարկներից որևէ մեկի ընտրության վերաբերյալ և պետք է նշվի՝ III հավելվածում ներկայացված հաշվարկման կոնկրետ որ եղանակն է օգտագործված:

Այն դեպքում, երբ 3-րդ հոդվածի համաձայն պահվող պաշարների ծավալների հաշվարկներում ընդգրկված պաշարներից որոշները գտնվում են ազգային տարածքից դուրս, ապա ամփոփագրում ներկայացվում են մանրամասներ տարբեր անդամ պետությունների կամ համապատասխան ՊՊԿԿ-ների կողմից պահվող պաշարների վերաբերյալ՝ ամփոփագրում դիտարկված ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ: Յուրաքանչյուր անդամ պետություն իր ամփոփագրում բոլոր դեպքերի առնչությամբ պետք է նաև նշի՝ արդյոք պաշարները պահվում են մեկ կամ ավելի տնտեսվարող սուբյեկտների, իր թե իր ՊՊԿԿ-ի կողմից ներկայացված պատվիրակման պահանջի համաձայն:

Անդամ պետության կողմից իր տարածքում մեկ այլ անդամ պետության կամ ՊՊԿԿ-ի համար պահվող ցանկացած պաշարի մասով այդ անդամ պետությունը պետք է կազմի և Հանձնաժողովին ներկայացնի ամփոփագիր, որում ներկայացված են յուրաքանչյուր օրացույցային ամսվա վերջին օրվա դրությամբ առկա պաշարները՝ ըստ ապրանքի կատեգորիայի բաժանված: Այդ ամփոփագրի մեջ անդամ պետությունը պետք է յուրաքանչյուր դեպքի առնչությամբ նշի նաև համապատասխան անդամ պետության կամ ՊՊԿԿ-ի, ինչպես նաև ներառված քանակությունների մասին:

Սույն հավելվածում նշված վիճակագրական ամփոփագրերը պետք է ներկայացվեն Հանձնաժողովին այն ամսվա վերջին օրվան հաջորդող 55 օրվա ընթացքում, որին վերաբերում է այդ ամփոփագիրը: Նույն ամփոփագրերը պետք է նաև ներկայացվեն Հանձնաժողովին՝ վերջինիս պահանջի դեպքում՝ այդ պահանջին հաջորդող 2 ամիսվա

ընթացքում: Այդօրինակ պահանջներ կարող են ներկայացվել, ոչ ուշ քան 5 տարի անց այն ժամանակահատվածից, որին վերաբերում են այդ տվյալները: